ԿՈՄՊԵՏԵՆՏԱՀԵՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇՉԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

ՆԱԻՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կրթության կառավարման մագիստրոս, մանկավարժ
Երևանի Մ. Նալբանդյանի անվան հ. 33 դպրոց, ՏԿԵ նախարարություն
abrahamyan–naira@bk.ru

DOI: 10.54503/978-9939-481-23-4-206

Համառոտագիր

Կրթական չափանիշները սահմանում են այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք սովորողները պետք է ունենան իրենց կրթական գործունեության կարևորագույն ու պատասխանատու ժամանակահատվածում:

Յուրաքանչյուր երկրի համար չափորոշիչը որպես կրթական բարեփոխումների կարևորագույն առանցքն է՝ հիմնասյուն:

Կրթության բարեփոխումների մասնագետները, սահմանում և առաջարկում են դպրոցական կրթության ցանկալի արդյունքներ ունենալու հստակ ցուցիչ և այդ արդյունքների միջոցով էլ պետք է չափվի և ընդգծվի սովորողների հաջողությունների հասնելու սահմանը: Ի վերջո, չափորոշիչներն օգնում են ուսուցանողներին գնահատել կատարած աշխատանքի որակական հատկանիշները:

Չափորոշիչը մարդու և քաղաքացու կրթական իրավունքի սահմանադրական երաշխիքների իրականացման հիմնական գործիքներից մեկն է:

Այն սահմանում է պետության ակնկալվող պահանջը յուրաքանչյուր դպրոցից՝ հանրակրթական բոլոր աստիճանների սովորողներից և շրջանավարտներից:

Այն հիմնվում է սովորողների կարողունակությունների (կոմպետենցիա) վրա՝ հավասարապես շեշտադրելով սովորողի գիտելիքը, հմտությունը, դիրքորոշումը և արժեքային համակարգը:

Այսինքն՝ սովորողը միջնակարգ կրթությունն ավարտելիս պետք է ձեռք բերի համապատասխան կարողունակությունների չափը, ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ կրթական աստիճանների (տարրական, հիմնական և միջնակարգ):

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ կրթական չափորոշիչ, կարողականություն, ուսումնառություն, ակնկալվող վերջնարդյունք, դիրքորոշում, հաղորդակցում, գիտելիք, արժեք:

COMPETENCY-BASED EDUCATION AND THE SPECIFIC NATURE OF ENSURING LEARNING OUTCOMES AS A COMPONENT OF THE NEW STATE STANDARD FOR GENERAL EDUCATION

NAIRA ABRAHAMYAN

Yerevan M. Nalbandyan Secondary School No. 33,
Ministry of Territorial Administration and Infrastructure
Department of Educational Management, MA student, Pedagogue
abrahamyan-naira@bk.ru

Abstract

Educational standards define the knowledge and skills that learners should possess during the most important and responsible period of their educational journey. For each country, the standard serves as a central axis for educational reforms—a fundamental pillar.

Experts in educational reforms define and propose a clear indicator for achieving desirable outcomes in school education. Through these outcomes, the boundaries for students' success should be measured and emphasised. Ultimately, standards help educators assess the qualitative characteristics of the work done.

The standard is one of the main tools for the realisation of constitutional guarantees of the educational rights of individuals and citizens. It defines the state's expected demands from each school, from students and graduates at all levels of general education.

It is based on learners' capabilities (competence), equally emphasising learners' knowledge, skills, attitudes, and value systems. That is, upon completing secondary education, a learner should acquire the required level of competence and meet the expected outcomes for the educational stages (elementary, basic, and secondary).

Keywords and phrases: Educational standard, competence, learning, expected outcomes, attitude, communication, knowledge, values.

КОМПЕТЕНТНОСТНОЕ ОБУЧЕНИЕ И СПЕЦИФИЧНОСТЬ ОБЕСПЕЧЕНИЯ ИТОГОВЫХ РЕЗУЛЬТАТОВ КАК СОСТАВЛЯЮЩАЯ ЧАСТЬ НОВОГО ГОСУДАРСТВЕННОГО СТАНДАРТА ОБЩЕГО ОБРАЗОВАНИЯ

НАИРА АБРААМЯН

Магистр управления образованием, педагог
Школа №33 имени М. Налбандяна г. Еревана, Министерство ОНКС РА
abrahamyan-naira@bk.ru

Аннотация

Образовательные стандарты определяют те знания и навыки, которыми учащиеся должны обладать в самый важный и ответственный период своей образовательной деятельности.

Для каждой страны образовательный стандарт является одной из важнейших основ образовательных реформ. Специалисты в области образовательных реформ определяют и предлагают чёткие показатели желаемых результатов школьного образования, с помощью которых можно оценивать и подчёркивать уровень достижения успехов учащихся. В конечном итоге, стандарты помогают педагогам оценивать качественные характеристики проделанной работы.

Стандарт является одним из основных инструментов реализации конституционных гарантий права человека и гражданина на образование. Он определяет ожидаемые требования государства к каждой школе, ко всем учащимся и выпускникам всех уровней общего образования.

Стандарт основывается на формировании компетенций учащихся, одинаково подчёркивая значение знаний, умений, навыков, отношения и систему ценностей учащегося.

То есть, по окончании среднего образования учащийся должен приобрести соответствующий уровень компетенций и достичь ожидаемых результатов обучения в соответствии с уровнями образования: начального, основного(базового) и среднего.

Ключевые слова и фразы: образовательный стандарт, компетенция, обучение, ожидаемый результат, отношение, коммуникация, знание, ценности.

Ներածություն

Կրթական չափանիշները դպրոցներին առաջադրելու գաղափարն առաջացել է դեռևս նախորդ դարակեսից: Նպատակը դպրոցների կարգավորող դաշտի բարելավման պահանջն էր, կրթության համակարգում բազմազանության ներդրումը, ուսուցանողների ուսուցման մեթոդներն ինքնուրույն ընտրելու և կիրառելու անհրաժեշտությունը և այլն:

Այդ ամենը ներդնելիս, ինչ խոսք, այն անմասն չի մնացել ռիսկայնությունից՝ կապված երկրում միասնական կրթական տարածքի, գնահատման համակարգի, առարկայացանկի, առարկայական բնագավառների, ժամաքանակների հետ:

Չափորոշիչների ներդրումն իր հետ բերեց նոր հնարավորություններ՝ մի շարք երկարաժամկետ խնդիրների լուծման հետ կապված, ուսումնական ծանրաբեռնվածության կարգավորման առումով, գնահատման

օբյեկտիվության բարձրացմամբ և այլն: Այստեղից էլ ծագեց այդ տարիների համար բնորոշ չափորոշչի նպատակի և գործառույթների ըմբռնումը՝ հետևյալ կետերով՝

- բոլոր սովորողների համար լինել մատչելի և որակյալ կրթության երաշխավորը,
- ապահովել երկրի միասնական կրթական տարածքի պահպանումը,
- ըստ կրթական աստիճանների (տարրական, հիմնական և միջնակարգ)՝ լինել կրթության համակարգի շրջանավարտների գնահատման չափանիշ,
- ստեղծել նախադրյալներ դպրոցականների ուսումնական ծանրաբեռնվածության բարելավման համար,
- բարձրացնել դպրոցականների կրթական նվաճումների գնահատման օբյեկտիվությունն ու հուսալիությունը՝ միավորային գնահատման համակարգից անցնել չափանիշի վրա հիմնված՝ ձևավորող գնահատման **[12]**:

Տեսական-մեթոդական հիմքեր

Արագ զարգացող ու փոփոխվող կյանքը, գիտության և տեխնիկայի շարունակական աճը մասնագետներից պահանջում էին աշխատանքային շուկային արագ հարմարվելու ձկունություն: Ամերիկյան հետազոտողները պարզել են, որ շատ հաճախ մարդկանց ինտելեկտի բարձր աստիճանը մասնագիտական գործունեության ժամանակ մնում է չիրացված: Այդ ժամանակներում լայն տարածված IQ թեստերը, որոնցով չափում էին մարդու իմացական մակարդակը, չէին երաշխավորում նրա մասնագիտական հաջող գործունեությունը: Թեստը տալիս էր բարձր արդյունք, մինչդեռ իրական կյանքում մարդը ցածր արդյունավետությամբ էր աշխատում:

Այս առումով 1950-ական թվականներից սկսած՝ ամերիկացի մանկավարժներն ու հետազոտողները կրթության բնագավառում իրենց նոր ուսումնասիրությունների հիմքում ավելի մեծ կարևորություն սկսեցին տալ հատկապես ուսումնառության նպատակներին ու դրանց առանձնահատկություններին:

Կատարած ուսումնասիրությունները հանգեցին նրան, որ որակյալ ու արդյունավետ կրթություն ունենալու համար կարևոր է փոփոխություններ կատարել հատկապես ուսումնառության առաջադրվող նպատակների մեջ:

Ըստ այդմ՝ շեշտադրվեց ուսումնառության արդյունք ունենալու գաղափարը, ինչի արգասիքը դարձավ արդյունքահեն ուսումնառության ծնունդը: Արդյունքահեն ուսումնառության նպատակն այն է, որ սովորողը կարողանա ոչ միայն յուրացնել առաջադրված գիտելիքը, այլև իր ուսումնառության ողջ ընթացքում ունենա չափելի, շոշափելի արդյունքներ:

Ժամանակների փոփոխությունները նոր մարտահրավերներ են նետել նաև կրթության ոլորտում: Այդ առումով՝ եվրոպական մի շարք երկրներ իրենց ազգային կրթության համակարգում մեծ դերակատարում են հատկացնում հատկապես կոմպետենցիաների վրա հիմնված ուսումնառությանը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի վերջին հրապարակումներում կոմպետենցիայի հասկացությունը մեկնաբանվում է որպես «գիտելիքների, որակավորումների, արժեքների, հարաբերությունների համախումբ, որն օգտագործվում է ամենօրյա իրավիճակներում» **[3, էջ 23]**:

Ի սկզբանե կոմպետենցիաների վրա հիմնված ուսումնառությունը կոչվել է «Վարպետության ուսումնառություն» կամ «Չափանիշների վրա հիմնված ուսումնառություն»:

Մեր մանակավարժական գրականության մեջ այս եզրույթը սկսել է կիրառվել ոչ վաղ ժամանակներից:

«Կոմպետենցիա» բառը ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում չկա: Հանդիպում ենք միայն Աշոտ Հայրապետյանի «Օտար բառերի բառարան» գրքում՝

1.օրենքներին, կանոնադրությանը, փաստաթղթերին մարդկանց իրազեկ լինելը

2. իրավասություն, իրավություն **[4, էջ 643]**:

Բառն ունի լատինական ծագում, ավելի գործածական է ռուսաց լեզվում:

Հայերենում«կոմոպետենցիա»բառըթարգմանվել է«կարողունակություն» տերմինով:

Ներկայումս կոմպետենցիաների բնութագրման վերաբերյալ, կարծես թե, չկա միարժեք, բոլորի համար ընդունելի սահմանում:

Ընդհանուր առմամբ, կոմպետենտությունը (компетентность) գործունեության սուբյեկտի ձեռքբերումն է, որը ենթադրում է համապիտանի (ունիվերսալ) գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ընդունակությունների և անձնային որակների դրսևորում: Կոմպետենտությունը կոնկրետ անձի կողմից կոմպետենցիաների համակարգի (компетенции) յուրացումն է: Իսկ կոմպետենցիան (компетенции) սովորողի՝ գործունեության ընթացքում առարկայացված կոմպետենտությունն է, գիտելիքների, կարողությունների, անձնային որակների, գործնական փորձառության համակարգը, որն էլ որոշում է անձի՝ գործունեությանը պատրաստ լինելը: Այսինքն՝ կոմպետենտությունը բնութագրում է գործունեության սուբյեկտին, իսկ կոմպետենցիաները վերաբերում են գործունեությանը **[5]**:

Հանրակրթության պետական նոր չափորոշչում կոմպետենցիան ներառված է հետևյալ սահմանմամբ. «Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են» (Հավելված 3) **[13]**:

Իսկ կրթության գործընթացում ինչպիսի՞ կոմպետենցիաների զարգացումն է կարևորվում և ո՞րն է նշված ուսումնառության առավելությունը:

2002 թվականին ԱՄՆ-ում ընդունված «21-րդ դարի հմտություններ» փաստաթղթում սահմանվում են այն գիտելիքներն ու հմտությունները, որոնց պետք է տիրապետի սովորողը, որպեսզի կարողանա հաջողության հասնի կյանքում և աշխատանքում: Դրանց թվին են պատկանում.

- ֆինանսական, տնտեսագիտական, ձեռնարկատիրական էկոլոգիական գրագիտությունը,
- սովորելու հմտությունները,
- քննադատական մտածողությունը,
- խնդիրներ լուծելու կարողությունը,
- տեղեկատվական գրագիտությունը:

Նշված պահանջներն, անկախ տարիքից, վերաբերում են բոլորին: Դրանց ձևավորման գործում էական ազդեցություն պետք է ունենա հանրակրթական

դպրոցը:

2006 թվականին Եվրախորհուրդը իր «Շարունակական կրթության առանցքային կոմպետենցիաներ» փաստաթղթում երաշխավորում է ութ առանցքային կոմպետենցիաներ: Ըստ այդմ՝ Հանրակրթական պետական չափորոշչի հիմքում դրվեց հետևյալ ութ առանցքային կարողունակությունը՝ **[13, էջ 4]**

- լեզվական գրագիտություն և կարողունակություն
- սովորել սովորելու կարողունակություն
- ինքնաճանաչողական և սոցիալական
- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
- թվային և մեդիա կարողունակություն
- մշակութային կարողունակություն
- մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
- տնտեսական կարողունակություն:

Այսպիսով՝ կոմպետենցիաները շրջանավարտի ինտեգրված դինամիկ բնութագրիչներն են, որոնք արտացոլում են ուսուցման ակնկալվող և չափելի վերջնարդյունքները (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, անձնային որակներ, գործնական փորձառություն), այսինքն՝ շրջանավարտի ձեռքբերումները ամբողջ դասընթացի կամ նրա մի հատվածի յուրացումից հետո, որոշակի գործունեություն ծավալելու նրա պատրաստությունն ու կարողությունը **[5, էջ 16]**:

Այսինքն՝ կոմպետենտահեն ուսուցումը սովորողին տալիս է ոչ միայն գիտելիք, այլև չափում է ստացած գիտելիքների, հմտությունների, արժեքի, դիրքորոշման վերջնարդյունքները: Այն սահմանվում է ոչ թե դասաժամով, այլ ուսումնառության արդյունքով:

Ավելի պատկերավոր դարձնելու համար այն համեմատում են ձեռքի գործունեության հետ: Որպեսզի ձեռքը հաջողությամբ իրականացնի ուղեղի կողմից իրեն թելադրած ֆունկցիան՝ գործողությունը, պետք է գործի դրվի ձեռքի ավելի փոքր միավորների՝ մատների գործունեությունը **[11]**:

Կարողունակությունն իր մեջ ներառված չորս որակների համատեղ միասնությունն է: Դրանցից որևէ մեկի բացակայությունը թույլ չի տա լուծել սովորողին առաջադրված խնդիրները:

Նշենք նաև, որ «Ժողովրդավարական մշակույթի կոմպետենցիաներ» մոդելի մեջ ներառված է 20 կոմպետենցիա՝ կարևորելով գիտելիքը, վերաբերմունքը, հմտությունները, քննական ընկալումները:

Արժեքներ

- արժևորել մարդկային արժանապատվությունը և մարդու իրավունքները,
- արժևորել մշակութային բազմազանությունը,
- արժևորել ժողովրդավարությունը, արդարադատությունը, արդարությունը, հավասարությունը և օրենքի գերակայությունը,

Վերաբերմունք

- անկանխակալ մոտեցում այլ մշակույթների, համոզմունքների, աշխարհայացքների և սովորույթների նկատմամբ,
- հարգանք,
- քաղաքացիական մտածողություն,
- պատասխանատվություն,

- ինքնակառավարման արդյունավետություն,
- հանդուրժողականություն անորոշ իրավիճակների նկատմամբ,

Հմտություններ

- ինքնուրույն ուսումնառության հմտություններ,
- վերլուծական և քննադատական մտածողության հմտություններ,
- լսելու և դիտարկելու հմտություններ,
- կարեկցանք,
- ճկունություն և հարմարվողականություն,
- լեզվական, հաղորդակցական և բազմալեզու հմտություններ,
- համագործակցելու հմտություններ,
- հակամարտությունների կարգավորման հմտություններ,

Գիտելիքներ և քննական ընկալում

- ինքնաճանաչողություն և ինքնաքննադատական ընկալում,
- լեզվի և հաղորդակցման միջոցների իմացություն և քննադատական ընկալում,
- գիտելիքներ և աշխարհի քննադատական ընկալում. քաղաքականություն, իրավունք, մարդու իրավունքներ, մշակույթ, մշակույթներ, կրոն, պատմություն, լրատվամիջոցներ, տնտեսություն, շրջակա միջավայր, կայուն զարգացում:

Գիտելիքը բնական, հասարակական երևույթների ճշգրիտ արտացոլումն է մարդու ուղեղում կամ մտածողության մեջ:

Այն պրակտիկայով ստուգված իրականության ճանաչողության արդյունք է: Գիտելիքներում արտահայտվում է մարդկանց ընդհանրացված փորձը, որը կուտակվել է հասարակական-պատմական պրակտիկայի ընթացքում **[9, էջ 15]**:

Գիտելիքի ձեռքբերումը պայմանավորված է բարդ ճանաչողական գործընթացներով՝ ընկալում, հաղորդակցություն և հիմնավորում:

Հմտությունը միևնույն գործողության կամ վարքի բազմակի կրկնությունն է: Այն սովորաբար սովորում և զարգացնում են վարժեցման արդյունքում, ներառում է այնպիսի գործողությունների իրագործում, որոնց նպատակը ցանկալի արդյունք ունենալն է:

Այլ կերպ ասած, հմտությունը նախանշած նպատակները լավ իրակա-նացնելու մարդու ունակությունն է՝ առանց դրա վրա հատուկ ուշադրություն սևեռելու, սակայն գիտակցության վերահսկողության ներքո **[13]**:

Արժեքը ներքին, ենթագիտակցված պատրաստակամության ակտիվությունն է որևէ գործընթաց իրականացնելիս: Այն ձեռքբերում է, հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, պետք է զգալ, գիտակցել և վերապրել:

Դիրքորոշումն ուղղություն է հաղորդում մարդու գործունեությանը և նախորդում է գիտակցական հոգեկան գործընթացներին:

Դիրքորոշումը կարող է լինել կարճատևհոգեվիճակ(այս դեպքում նրա սուբյեկտիվ և մասամբ գիտակցական դրսևորումն ուշադրությունն է) կամ անձի կայուն առանձնահատկություն (սևեռված դիրքորոշում), որը մշտական ուղղվածություն է հաղորդում նրա ակտիվությանը **[6]**:

Ի տարբերություն կրթության ավանդական մոտեցման՝ կոմպետեն-

ցիաների վրա հիմնված կրթությունը կարևորում է ոչ թե առանձին կոնկրետ որակները, այլ դրանց որոշակի համախումբը:

Ուսումնական առարկաների վրա հիմնված կրթակարգերում սահմանվում են այն գիտելիքները, կարողությունները և արժեքները, որոնք պետք է սովորողը ձեռք բերի առարկայի ուսումնասիրության արդյունքում: Կոմպետենտային մոտեցման դեպքում առարկաները դիտվում են որպես գործիք առավել ընդհանրական որակներ ձևավորելու համար: Ընդ որում՝ որպես կանոն, այդ որակներից (կոմպետենցիաներից) յուրաքանչյուրը ձևավորվում է մի քանի առարկաների ուսումնասիրության արդյունքում:

Կոմպետենտային մոտեցման դեպքում ուսումնական գործընթացը կազմակերպվում է այնպես, որ հնարավորինս նպաստի սովորողի այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների ձևավորմանը, որոնց սովորողը առնչվում է իր առօրյա և աշխատանքային գործունեությունը կազմակերպելիս: Կոմպետենտային մոտեցումը առավել բարձր պահանջներ է առաջադրում դասավանդողներին, քան թեմատիկ ուսուցման դեպքում է:

Այս մոտեցման դեպքում, կրթության բովանդակությունը ձևավորվում է կոմպետենցիաների հենքի վրա, այլ ոչ թե առանձին առարկաների: Հաջողությունը պայմանավորված է կոմպետենցիաների, այլ ոչ թե առանձին առարկաների յուրացմամբ: Վերջնարդյունքը ոչ թե տվյալ առարկայի հաջող յուրացումն է, այլ կոմպետենցիայի ձևավորումը:

Ուսումնասիրության մեթոդներ

Կոմպետենտահեն ուսումնառության արդյունքում սովորողը կունենա ինքնավստահություն, համակողմանի գիտելիքի այնպիսի ծավալ, որը հնարավորություն կտա շփվել տարբեր մասնագիտությունների տեր մարդ-կանց հետ, տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, այդ շփումների միջոցով կկարողանա կատարել վերլուծություններ, հետազո-տություններ, եզրակացություններ: Իսկ այդ ամենը սովորողին կտա վստահություն, որպեսզի կարողանա հետագայում իր իմացածը, սովորածը ձեռք բերած գիտելիքը կիրառի կյանքում:

Անհրաժեշտ է նշել, որ կրթական նոր չափորոշչի իրագործման ողջ գործընթացում յուրաքանչյուր շահառու (ԿԳՍՍ նախարարություն, ուսուցանող, սովորող, ծնող...) ունի իր մեծ դերակատարումն արժեքների ձևավորման և տեսլականի սահմանման հարցում, որը բերում է մի մեծ արժեհամակարգի ստեղծման և լավագույն արդյունքների ապահովման:

Վերջին տարիներին անընդհատ շեշտվում է, որ կրթությունն ուսուց-չակենտրոնությունից, որը 19-րդ դարի պրուսական կրթական մոդել է, պետք է փոխակերպվի աշակերտակենտրոն համակարգի, ինչը շատ դեպքերում չի իրագործվում:

Հայաստանյան կրթության համակարգը մեծ մասամբ ուսուցչակենտրոն է, որտեղ գործում են համահարթեցված պահանջներ բոլոր սովորողների ու ուսանողների համար, և այդքան էլ չեն կանոնվում անհատական առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ բոլոր սովորողների վերջնարդյունքը նույնն է ու չկան հստակ ու տարբերակված մոտեցումներ՝ տարբեր ունակությունների ու գիտելիքների տեր սովորողների գիտելիքների չափման համար:

Ուսուցչակենտրոն մոտեցումն օտարում է սովորողին կրթությունից, դառնում խոչընդոտ սովորողների համար, ինչպես նաև հակասության մեջ

մտնում կրթության ներառական, մասնակցային սկզբունքների հետ, ինչը պետք է թելադրված լինի ժամանակակից ժողովրդավարական սկզբունքներով ու մոտեցումներով:

Ընդհանրապես կրթության համակարգում կատարվող փոփոխություն-ները՝ կապված առարկայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի, ուսումնաօժանդակ նյութերի հետ, ինքնանպատակ չեն լինում: Դրանք կարող են պայմանավորված լինել հանրակրթութան բովանդակության ձևավորման հիմքում ընկած սկզբունքների, մոտեցումների, դիրքորոշումների հետ, ինչն էլ արտացոլված է հանրակրթության նոր չափորոշչում **[7, էջ 13]**:

Ինչպես վերը նշեցինք, չափորոշչի հիմքում ընկած է ութ առանցքային կարողունակությունների սահմանը: Այդ կարողունակությունների հենքի վրա ձևակերպված են տարբեր աստիճաններում՝ տարրական, հիմնական, միջնակարգ, շրջնավարտների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները: Սրանք այն վերջնարդյունքներն են, որոնց ապահովման դեպքում հնարավոր կլինի ապահովել ութ առանցքային կարողունակությունների ձևավորումը:

Ստացված արդյունքներ

Ինչ խոսք, այսօր աշխատաշուկայում գործատուները շարժվում են ժամանակի հրամայականի թելադրանքով՝ կարևորելով ոչ միայն ունեցած գիտելիքի ծավալը, որը տարեցտարի ենթարկվում է զգալի փոփոխությունների, այլև հստակ կոմպետենցիաների առկայությանը, այսինքն՝ ստեղծագործ հմտություններին, քննադատական մտածողության առկայությանը, սեփական դիրքորոշման արտահայտմանը և այլն:

Կոմպետենցիաների էական կարևորումը տեղաշարժեց ժամանակակից աշխատաշուկայի համար մասնագետների պատրաստման կրթական ծրագրերի սահմանները: Նախկինում նրանք որոշում էին այն գործառույթները, որոնք պետք է կատարվեն աշխատանքում, դրանց հիման վրա ստեղծվում էին մասնագրեր, ուսուցման մոդելներ և դրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ հմտությունների չափման համար թեստեր՝ փորձելով համեմատել գործոնային միավորներն աշխատանքի հաջողությունների հետ **[3, էջ 20]**:

Կարևոր է, որ սովորողը կյանք մտնելով՝ կրթական մակարդակը հասցնի նրան, որ կարողանա խնդիրներին կամ ընտրանքային հարցերին տա կողմնորոշիչ և խելամիտ լուծում, կարողանա ինքնուրույն սովորել, թարմացնել ունեցած գիտելիքները, զարգացնել համապատասխան աշխարհընկալումը, այսինքն՝ ձեռք բերի որոշումներ կայացնելու ունակություններ:

Այդ առումով կարևորվում է կոմպետենտության դերը, որը դիտվում է դինամիկ գործընթաց, որտեղ որևէ իրավասու անհատ մոբիլիզացնում և կիրառում է հոգեբանական ռեսուրսների ամբողջությունն ակտիվ և հարմար ձևով՝ առաջ եկած նոր հանգամանքներին արձագանքելու համար:

Եթե հայացք նետենք մեր կարթության համակարգին, ակնառու կդառնա մի բան՝ ավանդական գիտելիքի վրա հիմնված ուսումնառությունն իր առջև դրված խնդիրները չկարողացավ իրականացնել լիովին և արդյունավետ:

Գլխավոր և իրատես պատճառներից մեկն այն էր, որ կրթության համակարգի գլխավոր առանցքում ուսուցանողն էր, իսկ նրա գլխավոր նպատակը՝ գիտելիք փոխանցելն էր: Մինչդեռ ժամանակակից կրթության համակարգում կարևորագույն դերակատարն ուսումնառողն է:

Կոմպետենցիաների վրա հիմնված ուսումառության մեջ ամենակարևոր շեշտը դրվում է սովորողին ազատություն տալու և պատասխանատվության

«բեռը» զգալ կարողանալու վրա:

Այստեղ ուսուցանողը հասնում է նրան, որ սովորողն ինքն է սահմանում տվյալ դասի նպատակը, պլանավորում է այն, հետազոտություններ և վերլուծություններ է կատարում, այսինքն՝ քարտեզագրում է դասն ամբողջովին՝ իհարկե համագործակցելով ուսուցչի կամ դասավանդողի հետ:

Ակնառու է՝ կոմպետենցիաների վրա հիմնված ուսումառությունն աճող, զարգացող ուսումառության տեսակ է:

Եթե զուգահեռներ տանենք և համեմատենք գիտելիքահեն և կոմպետենտահեն ուսումնառությունների միջև, ակնառու կդառնա մի բան՝ գիտելիքների վրա հիմնված ուսումնառության հիմքում գիտելիքն է, այն հստակ է և փոփոխության գրեթե չի ենթակվում, իսկ կոմպետենտահեն ուսուցման հիմքում կարող ես ցանկացած գիտելիք զարգացնել, աճեցնել սեփական փորձի, ուսումնասիրությունների, հետազոտությունների արդյունքում:

Այն սովորողին տալիս է անսպառ հնարավորություն՝ ինքնաբացահայտման, ինքնարտահայտման, ինքնակազմակերպման համար, բացահայտում է սովորողի ուժեղ կողմերը, բարելավման հնարավորություններ և, ի վերջո, սովորողին տալիս է ինքնավստահություն, որպեսզի կարողնա գիտակցի և տեսնի իր սխալները, սովորի սեփական սխալների վրա և, որ ամենակարևորն է, կարողանա սովորածը ճիշտ ներկայացնել, զարգացնել, կատարելագործել՝ այն հետագայում կիրառելի դարձնելու նպատակով **[10]**:

Ուսուցման գործընթացում կարևոր դեր են խաղում կրթական միջավայրը և այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են դասընթացների բովանդակությունը, ինքը՝ ուսումնառողը, նրա անձը, նրա զարգացման օրինաչափությունները, ամբողջ մարդկային հասարակությունը՝ իր պատմությամբ, նյութական և հոգևոր մշակույթով:

Կոմպետենտահեն ուսուցում կազմակերպելու համար կարևոր է բաց միջավայրի ստեղծումը **[3, էջ 13]**:

Կոմպետենցիաների մյուս կարևոր կետը, ինչի վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել, համագործակցությունն է: Կոմպետենցիաների վրա հիմնված ուսումառության մեջ ընդգծվում է ոչ միայն ուսուցանող-սովորող կապը, այլև սովորող-սովորող համագործակցությունը:

Եզրակացություն

Անհերքելի է մի բան՝ անթերի կազմած կրթական ցանկացած փաստաթուղթ առ ոչինչ է, եթե գործածողը չունի համապատասխան գիտելիք, վարպետություն կամ պահանջվող գործիքակազմի կիրառման հմտություն: Իսկ մեր արժեհամակարգում, ցավոք, ամբողջապես իրավական փաստաթուղթ ուսումնասիրելն ու նրանով առաջնորդվելը դեռևս զարգացած չէ:

Ըստ այդմ՝ առաջարկում ենք՝

1. Հանրակրթության պետական չափորոշիչը՝ առարկայական չափորոշչի հետ միասին, դառնա կրթության կազմակերպիչների, ուսուցանողների համար հաճախ գործածվող փաստաթուղթ, այլապես որևէ վերապատրաստում կամ դասընթաց չի նպաստի ցանկալի վերջնարդյունքի ապահովմանը:
2. Ահրաժեշտություն է զգացվում վերանայելու պետական չափորոշչի որոշ դրույթների ու բաղադրիչների ձևակերպումներ. փոփոխության հետևանքով այն կմոտենա իրատեսական ու չափելի սահմանի:

3. Կոմպետենտահեն կրթությունը պահանջում է սովորողների գնահատումն իրականացնել՝ հաշվի առնելով ոչ միայն ստացած գիտելիքը, այլ նաև մտածողությունը, ստեղծարարությունը, մինչդեռ այսօր հանրակրթական դպրոցներում գնահատումն իրականացվում է հիմնականում թեստային կամ վերարտադրողական աշխատանքների շուրջ:
4. Մենթորական համակարգում ներառել ավելի փորձառու մասնա-գետների: Այդ դաշտը դարձնել վերահսկելի: Չստացվի՝ նույն թեմայի վերաբերյալ վերապատրաստող մասնագետները ուսուցանողներին փոխանցեն միմյանց հակասող գիտելիք ու հայեցակետեր:
5. Առարկայական ծրագրերը երբեմն այնքան ծավալուն են, որ դասավանդողները ստիպված են կենտրոնանալ նյութը հասցնելու, ոչ թե հմտությունների զարգացման վրա: Առաջարկում ենք՝ վերանայել ծրագրերը՝ կրճատելով բովանդակային ծանրաբեռնվածությունը: Ավելի մեծ տեղ տալ նախագծային և հետազոտական աշխատանքների իրագործմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթության մասին օրենքը 2009թ. հուլիսի 10, հոդված 4
2. Խանզադյան Հ. Կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում
3. Պետրոսյան Հ. Ուսուցման ռազմավարություններ, Երևան, 2021
4. Հայրապետյան Ա. Օտար բառերի բառարան, «Նաիրի» հրատարակչություն, Երևան, «Հեղինակային հրատարակություն», 2011
5. Մանկավաժական կրթության հայեցակագ, ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոն, Երևան, 2014
6. Ուզնաձեն Ն. Դ. «Դիրքորոշման հոգեբանության հիմնական դրույթները», 1961
7. Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, 2017
8. Մանկավաժական կրթության հայեցակագ, ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոն, Երևան, 2014
9. Ամիրջանյան Յու. Ա. Մանկավարժություն (Ուսումնական ձեռնարկ), Երևան, 2005, էջ 15
10. Խնզադյան Հ. Կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում https://www.youtube.com/watch?v=foGr7ZKtRfw 10.10.25
11. Մելիքյան Գ. Ուսուցիչների վերապատրաստման դասընթաց https://www.youtube.com/watch?v=jG3tQnNqysU (21.10.25)
12. История создания стандартов школьного образования. https://studref.com/485692/pedagogika/istoriya_sozdaniya_standartov_shkolnogo_obrazovaniya, (14.01.23)
13. https://www.arlis.am/ documentview.aspx?docid=149788 (11.01.23)
14. Քաղաքացիական կրթություն բոլորի համար http://am.civiceducation.ge /lessons/ 4–47 (15.12.26)